



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

211

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 19 » հոկտեմբեր 2022թ.

Ո Ր Ր Շ ՈՒ Մ No. 2865-Ձ

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԶԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ ՌԱԴԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԱՆՈՅԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N 3525/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության (արձանագրությունը կցվում է) ֆիզիկական անձ ՌԱԴԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԱՆՈՅԱՆԻ /Հասցե՝ ք. Երևան, Հերացու փ., 24շ., 28, ՀՎՀՀ՝ 37482855, ՀԾՀ՝ 1101470399/ չկատարված հարկային պարտավորությունը 07.07.2022թ. դրությամբ կազմել է 1.217.481 դրամ, որից հարկ՝ 1.180.644 դրամ, տույժ՝ 36.836 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 29.09.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների՝ ֆիզիկական անձի կողմից ք.Երևան, Կենտրոն եկամտային փողոց 1 շենք, 16/3 տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը 05.05.2021 թ-ից մինչև 01.08.2031թ ժամկետով ամսական 1.500.000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով տրամադրվել է վարձակալության /ենթավարձակալության/:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, 141-րդ հոդվածի վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ: Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետի, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60,0 մլն. դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկվում է լրացուցիչ եկամտային հարկ 10% դրույքաչափով:



Համաձայն Օրենսգրքի 269-րդ հոդվածի 1-ին մասի, եթե ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների վարձակալական պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն համարվում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, ինչպես նաև օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից), բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Հետևաբար՝ ֆիզիկական անձի հետ վարձակալական պայմանագիր կնքելու դեպքում՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտն ազատվում է ֆիզիկական անձին վճարվող վարձավճարներից եկամտային հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու հարկային գործակալի պարտավորությունից:

Ֆիզիկական անձ ՌԱԴԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԱՆՈՅԱՆԻԿԻ կողմից չի ներկայացվել 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 07.07.2022թ. դրությամբ կազմել է 1.217.481 դրամ, որից հարկ՝ 1.180.644 դրամ, տույժ՝ 36.836 դրամ:

Հարկերը հաշվարկվել են Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով, տույժերը՝ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ֆիզիկական անձ՝ ՌԱԴԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԱՆՈՅԱՆԻԿՑ գանձել 1.217.481 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսյակի՝

07.07.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ / Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տույժ անք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2022թ	1.180.644	36.836		1.217.481	պետական բյուջե	900008000 490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՎԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:



ՔՔ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57  
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրագելելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄԵՆՃԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը \_\_\_\_\_  
 Ստորագրություն հարկ վճարողի /կամ իրենց կողմից/ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ անձի անուն ազգանուն \_\_\_\_\_ ամսաթիվ \_\_\_\_\_

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝**

*Հարկ վճարողի վարարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:*

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ Մարիաննա Պետրոսյան, հեռ. 011-54-91-91 /91-86/:



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵ